ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2019 թվականի N: 42-Ա ք.Գյումրի

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի» 10-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին միջոցառումների կազմակերպման համար սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ նշանակել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Տիգրան Մինասյանին:
3. Հանձնաժողովի քարտուղար նշանակել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ Շուշաննա Հովհաննիսյանին:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2019 թվականի մարտի 07-ի թիվ 42-Ա որոշման

ԿԱԶՄ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Տիգրան Մինասյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական (նախագահ),

Վաչագան Վարդանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ (անդամ),

Աղավնի Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ (անդամ),

Էմմա Բաղդասարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի փոխմարզպետի օգնական (անդամ),

Անի Մաղաքյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական (անդամ):

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է